ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 Նոյեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

151
(3001)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹՔԵԼԸ ՆԵՐՎՈՒՄ Է, ԹՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳՐԵԼԸ՝ ՊԱՏԺՎՈՒՄ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՄԲ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ ՀՀ Ազգային ժողովում հերթական անգամ խուլիգանական պահվածքով է աչքի ընկել. «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ նա հայհոյանքներ է հնչեցրել, փողոցային բառապաշար գործածել, որը լսելի է եղել միջանցքներում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ՝ կեսօրից հետո, ԱԺ-ի «Հայաստան» խմբակցության սենյակների հատվածում՝ դեպի ճաշարան տանող միջանցքում, աղմկահարույց միջադեպ է տեղի ունեցել MediaHub.am կայքի լրագրող Վահե Մակարյանի եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի միջեւ: Մեր տեղեկություններով՝ Վահե Մակարյանը Ալեն Սիմոնյանին մոտեցել է հարցազրույցի խնդրանքով, սակայն խոսակցությունը ցանկալի հունով չի գնացել, իրավիճակը լարվել է, զրույցը վերածվել է վիճաբանության, հնչել են փոխադարձ հայհոյանքներ, որոնք լսվել են ողջ խորհրդարանում: Իրավիճակն այնքան է թեժացել, որ թիկնազորով շրջող ԱԺ նախագահի անվտանգության աշխատակիցները, «ավանդույթի համաձայն», բռնել են լրագրող Վահե Մակարյանի ձեռքերը, հավանաբար, որպեսզի Սիմոնյանը հարվածի կամ թքի նրա վրա: Բայց, բարեբախտաբար, այս անգամ Ալեն Սիմոնյանը չի թքել, եւ նույնիսկ չի հարվածել, այլ միայն բղավել է, հայհոյել եւ փողոցային վարքագիծ դրսեւորել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վահե Մակարյանի հետ՝ պարզելու, թե ինչ է կատարվել: Մեր գործընկերը հաստատեց, որ իր եւ Ալեն Սիմոնյանի միջեւ երեկ միջադեպ է տեղի ունեցել, պատմեց, որ, իսկապես, մեր տեղեկությունները ճիշտ են, եւ որ նրանց խոսակցության ժամանակ իրավիճակն այնքան է լարվել, որ Սիմոնյանի անվտանգության աշխատակիցները բռնել են լրագրողի ձեռքերը. «Միջադեպ, այո, եղել է, որը, կարծում եմ, հարթվել է: Չգիտեմ՝ որտեղից է տարածվել տեղեկությունը. հավանաբար Սիմոնյանի բղավոցներն են լսվել: Չգիտեմ՝ հարվածելո՞ւ նպատակով ձեռքերս բռնեցին, թե՞ սովորության համաձայն՝ այլ գործողություն էր Ալեն Սիմոնյանն ուզում անել, բայց մի պահ եղավ՝ նա փորձեց հարձակվել ինձ վրա, նրա թիկնապահներն էլ բռնեցին ձեռքերս, բայց Սիմոնյանը խոհեմություն ցուցաբերեց, ու հետեւանքների մասին մտածելով՝ այլ քայլերի չդիմեց. այդքանով ավարտվեց», - պատմեց Վահե Մակարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ ԱԺ նախագահի խոսնակ Մովսես Հարությունյանի հետ՝ պահանջելով ԱԺ նախագահի անունից տալ պարզաբանումներ: Սակայն խոսնակն ասաց՝ գրավո՛ր ուղարկեք հարցը:

Ուղարկեցինք. «Հարգելի՛ պարոն Սիմոնյան, մեր տեղեկություններով՝ այսօր խորհրդարանի միջանցքներում միջադեպ է տեղի ունեցել MediaHub.am-ի լրագրող Վահե Մակարյանի եւ Ձեր միջեւ:

Միջադեպի ժամանակ Դուք բարձրաձայն հայհոյանքներ եք հնչեցրել լրագրողի հասցեին, որոնք լսվել են խորհրդարանի ողջ միջանցքում: Իրավիճակն այնքան է թեժացել, որ Ձեր անվտանգության աշխատակիցները բռնել են լրագրողի ձեռքերը, որպեսզի հարվածներ հասցնեք նրան, սակայն այս անգամ չեք թքել եւ չեք հարվածել՝ ավարտելով ամեն ինչ հայհոյանքներով եւ ԱԺ միջանցքում փողոցային բառապաշար գործածելով՝ լսելի բոլորի, այդ թվում՝ նաեւ միջանցքներում գտնվող կանանց համար»:

Այսինքն՝ ինչ ենք տեսնում. թքելը ներվում է Նիկոլ Փաշինյանի կողմից, իսկ թքելու մասին թռուցիկ տարածելը՝ պատժվում ազատազրկմամբ: Սա այն է, ինչ պետք է իմանալ Նիկոլ Փաշինյանի արդարադատության մասին:



Այս տարվա փետրվարի վերջին ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ՀՀ ՊՆ նախկին փոխնախարար Գագիկ Մելքոնյանի տան մոտ պայթյուն հնչեց: Ավելի ուշ պարզվեց, որ հարեւանի տան բակում էր այն: ՔՊ-ականները, սակայն, տոտալ վախի մեջ էին, քանի որ զուգահեռաբար Գուրգեն Արսենյանի գրասենյակի առջեւ էին ռումբ տեղադրել, բայց այն չէր պայթել: Այս դեպքերով ՀՀ քննչական կոմիտեն ՔՊ-ական պատգամավորների տան եւ գրասենյակների պայթյունի դեպքերով քրեական վարույթ է նախաձեռնել, եւ վարույթի շրջանակում կան կալանավորված 3 անձինք, որոնք չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Եվ ահա, այս գործով հարցաքննվել է նաեւ ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանը, որի տված ցուցմունքը հայտնվել է «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում: «Հարեւանիս՝ Արթուր Բաղդասարյանի տանը տեղի ունեցած պայթյունը քննարկել եմ վերջինիս հետ, սակայն իմ մտքով չի անցել, որ կատարվածը ահաբեկչություն է, եւ թիրախում ես եմ: Նույնիսկ հրապարակային հարցազրույցներից մեկի ժամանակ ասել եմ, որ այդ պայթյունը ինձ հետ առնչություն չունի, սակայն որոշ ժամանակ անց իրավապահներից տեղեկացել եմ, որ կատարվածը ահաբեկչություն է եղել եւ ուղղված է եղել իմ դեմ»:

ՀԱՐՑ. Դուք սպառնալից բովանդակությամբ հաղորդագրություններ ստացե՞լ եք հիշյալ դեպքից առաջ կամ հետո, եթե այո՝ ապա մանրամասնե՞ք: *ՊԱՏԱՍԽԱՆ.* սպառնալիքներով որեւէ հաղորդագրություն չեմ ստացել: *ՀԱՐՑ.* Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ ահաբեկչություն կատարողները թիրախավորել են հենց Ձեզ ու ԱԺ պատգամավոր Գուրգեն Արսենյանին: *ՊԱՏԱՍԽԱՆ.* Չեմ կարող որեւէ պատճառ նշել: *ՀԱՐՑ.* Երբ տեղեկացաք, որ ահաբեկչությունը պատրաստված է եղել Ձեր դեմ, այդ ժամանակ Ձեր կյանքին, առողջությանը եւ գույքին սպառնացող վտանգ զգացե՞լ եք, այն Ձեր մեջ առաջացրե՞լ է տագնապի, անհանգստության զգացողություններ, թե՞ ոչ: *ՊԱՏԱՍԽԱՆ.* Իհարկե, ես վախ զգացել եմ ընտանիքիս անդամների կյանքի եւ առողջության համար, քանի որ նշված տանը բնակվում է իմ ընտանիքը, թոռներս, եւ նրանց կյանքին ու առողջությանը վերը նշված գործողության հետեւանքով կարող էր վնաս պատճառվել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Գլխավոր դատախազության դատախազները Նիկոլ Փաշինյանի՝ ՔՊ վարչության նիստի տեսանյութի հրապարակումից են տեղեկացել, որ դատախազի տեղակալ Սրբուհի Գալյանը արդարադատության նախարար է նշանակվում ու լքում է համակարգը: Անգամ դատախազները ներքին խոսակցության ժամանակ կարծիք են հայտնել, որ Գալյանը կամ վերջին պահին է իմացել, որ նախարարի թեկնածուներից մեկն է, կամ նրանից պահանջել են չխոսել որեւէ մեկի հետ մինչեւ ՔՊ վարչության մոտ «քննություն» հանձնելը: Արդյունքում, Գալյանի հեռանալուց հետո, համակարգում սկսվել են խոսակցությունները, որ դեռեւս 2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալ Սրբուհի Գալյանը առաջիկա օրերին պաշտոնից ազատման դիմում կգրի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՊ-ի երեկվա՝ գիշերային ինքնաքննադատության նիստը թեժ է եղել: ՔՊ գրասենյակում հավաքված իշխանական կորիզը քննարկել է, որ պետք է պատժել որոշ թիմակիցների: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նիստի ընթացքում որոշ երիտասարդ ՔՊ-ականներ բարձրացրել են Հովիկ Աղազարյանի մանդատի անհամատեղելիության հարցը, քանի որ Աղազարյանն օգտագործել է ամբիոնը՝ իր որդիների գործերից խոսելու համար, ինչը արգելված է պատգամավորին օրենքով. նա շահերի բախում ունի: Մի խումբ առավել ուժայիններին քննադատողները բարձրացրել են Արգիշտի Քյարամյանի պահվածքի անթույլատրելիության հարցը: Մի խումբ էլ հայտարարել է, որ բոլոր խարդավանքների հեղինակը «ծերուկ» Անդրանիկ Քոչարյանն է, որը փորձում է բոլորին բոլորի դեմ հանել խմբակցության ներսում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցը բարձրացնողների խումբը մեծանում է՝ Նիկոլ Փաշինյանի աներոջդի Հրաչյա Հակոբյան, ՇՄ նախարար Հակոբ Սիմիդյան, Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյան, ԱԺ պատգամավոր Վիլեն Գաբրիելյան ու էլի շատեր, բայց կոնկրետ որոշումների դեռ վերջնականապես չեն հանգել: Զարգացումների մասին՝ առաջիկայում:

ԶՐՈՒՅՑ

«ՑԱՆԿԱԼԻ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԻ COP 29-ԻՆ», ՍԱՀԱԿՅԱՆ

ArmLur.am-ը զրուցել է իրավապաշտպան, «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Սիրանուշ Սահակյանի հետ:

-Տիկին Սահակյան, նոյեմբերի 11-ին Ադրբեջանում COP-29 պետք է կայանա. Հայաստանի մասնակցության հարցը դեռեւս քննարկվում է, բայց Դուք Ձեր հարցազրույցներից մեկում շեշտել էիք, որ եթե Հայաստանը մասնակցի, ապա այն կարեւոր կարող է լինել մեզ համար, որովհետեւ այդպիսով հնարավոր կլինի ճնշում գործադրել Ադրբեջանի վրա՝ հայ ռազմաքաղաքական գերիների վերաբերյալ: Այս պահին ի՞նչ եք կարծում, ի՞նչ եւ ինչպե՞ս պետք է անել այդ նպատակին հասնելու համար:

-COP-29-ի՝ Բաքվում անցնելու առնչությամբ հայկական կողմը քաղաքական աջակցություն է հայտնել Ադրբեջանին, եւ այս աջակցությունը հանգեցրել է որոշակի թվով գերիների ազատ արձակման ու դրա համար պետության, նաեւ քաղաքականության հետեւողականության տեսանկյունից անբացատրելի կլինի, եթե Հայաստանը բոյկոտի, որ COP-29-ը Բաքվում է անցկացվելու: Մյուս կողմից՝ միջազգային միջոցառում է սա, հյուրընկալող երկրները կարող են փոփոխվել, սակայն միջոցառման օրակարգը, խնդիրները, որոշումների կայացումը տեղի են ունենում միջազգային կառույցի ձեւաչափում, եւ ճիշտ չեմ համարում, որ Հայաստանը մեկուսացված լինի որեւէ միջազգային գործընթացից:

Այս միջոցառումը կարեւոր է նրանով, որ այստեղ քննարկվում են բնապահպանական խնդիրներ, որոնք գլոբալ են, եւ յուրաքանչյուր երկիր պետք է ներգրավվածություն ունենա դրանց լուծման գործում: Հայաստանը եւս ունի բազմաթիվ խնդիրներ, ադրբեջանական գործողությունները եւս հանգեցրել են բնապահպանական վիճակի վատթարացման Արցախում, Հայաստանում: Այս հարթակը նաեւ քննարկման առարկա է դարձնում իրավունքի գերակայությանը, մարդու իրավունքներին առնչվող հարցերը՝ ավելի ածանցվող կերպով, դրա համար կարծում եմ՝ Հայաստանը պետք է մասնակցի, իր ձայնը լսելի դարձնի քննարկվելիք յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Մյուս կողմից, հաշվի առնելով ակտիվ ներգրավվածությունը, միջազգային համայնքի համատեղումը մեկ վայրում՝ Հայաստանը պետք է կարողանա այն ուղիղ կոմունիկացնել իրեն առնչվող մարդու իրավունքների, բնապահպանական խնդիրների հետ, որոնք վերաբերում են նաեւ Ադրբեջանին:

Այս միջոցառումների ժամանակ նաեւ քաղաքական ճնշումներ են գործադրվում, եւ Հայաստանը, կարծում եմ, պետք է շարունակաբար օգտվի COP-29-ի գործոնից՝ նաեւ հայ գերիների ազատ արձակման հարցը լուծելու համար:

-Տիկին Սահակյան, իսկ Ադրբեջանը թույլ կտա՞, որ այդ հարթակում Հայաստանը խոսի գերիներիի մասին, քանի որ գիտենք՝ ինչ ճնշումների է կարող է դիմել Ադրբեջանը:

-Եթե թույլ չտան, ապա այդ չթույլատրելիության գինը պետք է լինի քաղաքական պայմանավորվածությունը՝ գերիներ ազատ արձակելու վերաբերյալ: Այսինքն, եթե Հայաստանը կարողանա հասնել նրան, որ հաստատի իր մասնակցությունը, միեւնույն ժամանակ համաձայնի, որ գերիների խնդիրը չբարձրաձայնվի մի պայմանով, որ COP-29 միջոցառման անցկացմանը զուգահեռ Ադրբեջանը որոշ թվով գերիների ազատ կարձակի, ապա կարծում եմ, որ մեր դիվանագիտությունը այդ իմաստով շահած կլինի:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԱՐՍԸ՝ ՑԱՆՑԱՀԵՆՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հակակոռուպցիոն կոմիտեն ծանուցում է պատրաստելու ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի համար, եւ նրան առաջիկայում հրավիրելու են հարցաքննության, որ պարզեն, թե ովքեր են եղել իրեն դիմողները:

Հոկտեմբերի 15-ի խորհրդարանական լսումների ժամանակ Քննչականի ղեկավարի ու իշխանական պատգամավոր Հովիկ Աղազարյանի միջեւ վեճ էր ծագել: Աղազարյանը դիտողություն էր արել Քյարամյանին, հորդորել պատգամավորների հետ հարգալից շփվել:

Վեճի ընթացքում Քննչական կոմիտեի ղեկավարը պնդել էր, թե իրեն առնվազն երկու անգամ դիմել են Աղազարյանի որդու հետ կապված քրեական գործով՝ «մեքենաները վերադարձնելու վերաբերյալ»:

«Բա, եթե մենք խոսում ենք կոռուպցիայի դեմ պայքարից, հովանավորչությունից, խնդրում եմ՝ պատասխանեք այս հարցին», - ասել էր Քյարամյանը:

Այս հայտարարության հիման վրա՝ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը:

Ասել է թե՝ հակակոռուպցիոն կոմիտեն պետք է պարզի՝ ովքեր են եղել այն երկու անձինք, որոնք զանգահարել են Արգիշտի Քյարամյանին ու գործի քննությանը միջամտել:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ականների շրջանում շարունակում է հետաքննություն իրականացրել:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանից հետաքրքվել է՝ արդյոք նա է զանգահարել Արգիշտի Քյարամյանին՝ Հովիկ Աղազարյանի որդու քրեական գործով: Վերջինս արձագանքեց, որ այդ հարցով չի դիմել, սակայն դիմել է մեկ այլ խնդրով. իր ընտանիքի հանդեպ մի տհաճ միջադեպ է տեղի ունեցել: «Իմ հարսը եւ նրա քույրը վարձով են տալիս իրենց բնակարանը, որը գտնվում է Օրբելու փողոցում, դեռեւս ամռանը՝ հայտարարություն տալուց հետո, նրանց զանգ է գալիս, եւ մի անձ ասում է՝ դուք հաշվեհամար ուղարկեք, որպեսզի փոխանցենք տան վարձավճարը: Հարսս միամտորեն ուղարկում է հաշվեհամարը, եւ ընդամենը 15 րոպե հետո ոչ միայն նրա հաշվի վրայից ամբողջ գումարն են տանում, այլեւ մեկ միլիոն դրամի վարկ են վերցնում նրա անունով: Ես ստիպված եղա մոտենալու պարոն Քյարամյանին», - «Ժողովուրդ» օրաթերթին պատմեց ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳԱԳԻԿ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԸ՝ ՔՊ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԵՐԺՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը տարբեր թեկնածուներ քննարկելուց հետո երեկ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի տեղակալ Սրբուհի Գալյանին առաջադրեց Արդարադատության նախարարի պաշտոնում:

ՔՊ վարչության նիստում քննարկվել են նաեւ ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի, Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի թեկնածությունները:

Գագիկ Ջհանգիրյանը ոլորտի հնաբնակներից է, նա տարբեր տարիների բարձր պաշտոններ է զբաղեցրել՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ եւ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:

Իսկ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնից հեռացել է սկանդալային ձայնագրության հրապարակումից հետո, որը 2022 թ.-ին իր ասուլիսում հրապարակել էր Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանը:

Ձայնագրությունում Գագիկ Ջհանգիրյանը հորդորում է այդ ժամանակ դեռ ԲԴԽ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ռուբեն Վարդազարյանին հրաժարական տալ: Փաստացի, չնայած նման փորձառու թեկնածուներին, Նիկոլ Փաշինյանի ֆավորիտը եղել է Սրբուհի Գալյանը, որն էլ վարչության որոշմամբ արդարադատության նախարարի թեկնածու առաջադրվեց:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հետ՝ պարզելու, թե արդյոք ինքը վատ չի զգացել, որ ՔՊ-ն իրեն մերժել է. «Դա քաղաքական քվեարկություն է, ես վատ չեմ զգացել, որ ինձ չեն ընտրել, այսքան բան»,- եզրափակեց Ջհանգիրյանը եւ անջատեց հեռախոսը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ

Հայոց ցեղասպանության ճանաչման օրակարգը Հայաստանի արտգործնախարարության թիվ մեկ առաջնահերթությունը չէ. այս մասին ԱԺ-ում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ քննարկումները ներկայացնելիս հայտնեց ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

«Պատմության ողբերգական անցքերը ուսումնասիրելը կամ դա թիվ մեկ առաջնահերթություն դարձնելը, անշուշտ, ԱԳՆ օրակարգում չէ»:

Միրզոյանի խոսքով՝ ԱԳՆ թիվ մեկ առաջնահերթությունը Հայաստանի Հանրապետության շուրջ խաղաղության եւ կայունության ապահովումն է: Մենք սրա շրջանակներում թիվ մեկ քայլը, որ մենք դիտարկում ենք եւ որի ուղղությամբ մեր ջանքերը գործադրում ենք, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացն է:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԿՆՎԱԶԻ

Պետությունը նախատեսում է նվազեցնել հանրային պաշտպանների թիվը:

Այս մասին ասաց ՀՀ արդարադատության փոխնախարար, նախարարի պարտականությունները կատարող Արմենուհի Հարությունյանն ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2025 թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումներում:

«Նախորդ տարի հանրային պաշտպանների թիվն ավելացել էր 15-ով: Հիմա նախատեսվում է կրկին կրճատել այդ թիվը», - ասաց Արմենուհի Հարությունյանը:

Նա դրանով պայմանավորեց Հանրային պաշտպանի գրասենյակին ուղղվող բյուջեի նվազեցումը:

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ՝ ԱԼՄԱ-ԱԹԱՅԻ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ֆրանսիան աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացին, որը պետք է տեղի ունենա Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա: Գորիսում լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

«Մենք աջակից ենք դելիմիտացիայի պրոցեսին, որը երկու երկրների միջեւ սկսվել է, եւ դա պետք է տեղի ունենա Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, որի շուրջ կողմերը համաձայնության են եկել»,- հայտարարեց դեսպանը:

Հայաստանն ու Ադրբեջանը հոկտեմբերի 25-ին վավերացրել են երկու երկրների սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգը:

50 ՄԻԼԻՈՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՔՎԵԱՐԿԵԼ Է

Ավելի քան 50 միլիոն ամերիկացի արդեն վաղաժամկետ քվեարկել է ԱՄՆ նախագահական ընտրություններում, որոնք տեղի են ունենալու նոյեմբերի 5-ին: Այս մասին հաղորդում է Axios լրատվական հարթակը՝ հղում անելով Ֆլորիդայի համալսարանի վաղաժամկետ քվեարկության համակարգի տեղեկատվությանը:

Հրապարակված տվյալների համաձայն՝ այդ ընտրողների մոտավորապես 39%-ը գրանցված դեմոկրատներ են, իսկ շուրջ 36%-ը՝ գրանցված հանրապետականներ: Ընդ որում, քվեարկած բոլոր անձանց 41%-ը 65-ից բարձր տարիքի են:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հյուսիսային Կորեայի արտաքին գործերի նախարար Ցոյ Ցոն Հին կորեական պատվիրակության հետ պաշտոնական այցով ժամանել է Մոսկվա:

Այս մասին հայտնում է ՌԻԱ Նովոստին՝ հղում կատարելով սեփական դիվանագիտական աղբյուրներին:

Վերջիններիս փոխանցմամբ՝ Մոսկվա ժամանած Հյուսիսային Կորեայի արտաքին գործերի նախարարի ու Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի միջև ավելի ուշ նախատեսված են բանակցություններ:

ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀԱՊԿ ՋՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականի սեպտեմբերին Բելառուսում կանցկացվեն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների համատեղ զորավարժությունները:

Այս մասին հաղորդում է Բելառուսի պաշտպանության գերատեսչության մամուլի ծառայությունը՝ վկայակոչելով երկրի պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Վիկտոր Խրենինի՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանղալի Թասմաղամբետովի հետ հանդիպմանն արված հայտարարությունը:

ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆԻ ՀՐԵՏԱԿՈԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի (UNIFIL) հրամանատարությունը հայտարարել է Ռաս ալ-Նակուրա հրվանդանի վրա գտնվող «կապույտ սաղավարտների» կենտրոնակայանի հրթիռակոծման մասին: Այս մասին ասվում է UNIFIL-ի մամուլի ծառայության հաղորդագրությունում:

Հաղորդագրությունում ասվում է, որ վերանորոգման կետի մոտ ընկած հրթիռը արձակվել է հյուսիսային կողմից:

«Մենք կասկածում ենք, որ այս հրթիռը արձակվել է «Հըզբոլլահի» կամ դրա հետ կապված խմբի կողմից», - նշվում է տեքստում:

«ՅՈՒՆԻՖԻԼ-ը հիշեցնում է «Հեզբոլլահին» եւ մյուս բոլոր կողմերին Լիբանանում խաղաղապահ առաքելության անձնակազմի եւ ունեցվածքի անվտանգությունն ապահովելու իրենց պարտավորությունների մասին:

ԿՈՉ՝ ԱՇԽԱՐՀԻՆ

ԿԱՊՈԹԵՆ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոչ է հղել աշխարհի բոլոր մարդկանց միանալ նոյեմբերի 10-ին հայ գերիների համար կազմակերպվող աղոթքին:

«Մենք վստահ ենք, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի կողմից նախաձեռնած ընդհանրական աղոթքը կխթանի քրիստոնեական համայնքների, դիվանագիտական առաքելությունների, լրատվամիջոցների եւ միջազգային համապատասխան բոլոր կազմակերպությունների մասնակցությունը:

...Անկեղծորեն հույս ենք տածում, որ այս հոգեւոր ջանքերը կբարձրացնեն համաշխարհային իրազեկությունը շարունակվող հումանիտար ճգնաժամի վերաբերյալ եւ իրենց նպաստը կբերեն ճշմարտության ու արդարության վրա հիմնված խաղաղարար լուծմանը»,-նշել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Արձագանքելով այս կոչին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) հրավիրում է նոյեմբերի 10-ին՝ Ադրբեջանում կազմակերպվող COP29 կլիմայական գլոբալ գագաթնաժողովի նախօրեին, բոլոր բարի կամքի տեր մարդկանց միանալու Հայաստանին նվիրված աղոթքի օրվան՝ հանուն խաղաղության հաստատման, փախստականների աջակցության եւ գերիների ազատ արձակման:

2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի դեմ իրականացված ռազմական ագրեսիան, դրան հաջորդած Լաչինի միջանցքի տասնամյա շրջափակումը եւ 2023թ. սեպտեմբերին շուրջ 120.000 հայերի տեղահանումը իրենց հայրենի երկրից մնում է հրատապ խնդիր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը եւս միացել է աղոթքի օրվա կոչին:

«Կոչ ենք անում բոլոր կրոնական համայնքներին, միջազգային կառույցներին եւ բարի կամքի տեր մարդկանց միանալ մեր աղոթքին՝ միաժամանակ զորացնելով ջանքերը պահանջելու համար բոլոր հայ գերիների անհապաղ եւ անվերապահ ազատ արձակումը Բաքվից:

...Մենք հիշեցնում ենք COP29 գագաթնաժողովին մասնակցող միջազգային հանրությանը, որ արդարությունը եւ խաղաղությունը սերտորեն փոխկապակցված են եւ չի կարելի իրարից զատել: Մենք չենք կարող պահանջել կլիմայական արդարություն՝ առանց դատապարտելու մարդու իրավունքների խախտումները»,- նշել է Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը:

ԵՀԽ արձանագրում է, որ COP29-ը եզակի հնարավորություն է, որպեսզի կոչ արվի 23 հայ գերիների, ինչպես նաեւ Ադրբեջանի բանտերում գտնվող ադրբեջանցի քաղաքական բանտարկյալների եւ լրագրողների անվերապահ ազատմանը:

ԵՀԽ-ի նախագահ Բ. Դոկտոր Հայնրիխ Բեդֆորդ-Շտրոմը՝ ընդգծելով, որ Հայաստանը կարիքն ունի մեր աղոթքների, մասնավորաբար ասել է. «Քրիստոնեական հավատքը ուղեկցել է հայ ժողովրդին Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրումից ի վեր՝301 թվականից... Ապագան անորոշ է»:

Բեդֆորդ-Շտրոմն նշել է, որ Աստված կառաջնորդի հայ ժողովրդին, եւ մենք կարող ենք միանալ Աստծուն մեր աղոթքներով. «Մեր աղոթքները կհասնեն նրանց սրտերին եւ հոգիներին ու կզորացնեն նրանց»:

ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Ռ. Պրոֆ. Դոկտոր Ջերի Պիլայը կոչ է արել բոլոր եկեղեցիներին միանալ աղոթքին եւ դիմել միջազգային հանրությանը շարունակելու աջակցության ցուցաբերումը:

«Մենք մնում ենք աղոթական համերաշխության մեջ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Հայաստանի էկումենիկ գործընկերների հետ»,-ասել է Դոկտոր Ջերի Պիլայը՝վերահաստատելով իրենց կոչն ուղղված արդար եւ կայուն խաղաղության՝միջազգային հումանիտար եւ մարդու իրավունքների օրենքներին համապատասխան:

ԵՀԽ-ն նոյեմբերի 10-ին՝ Ժնեւում, ժամը 17:00-ին Սուրբ Պետրոսի տաճարում կկազմակերպի մասնավոր աղոթքի արարողություն՝հայ համայնքի հետ համագործակցաբար:

Բարեգութ Աստված, դիմում ենք քեզ հայ ժողովրդի համար:

Շնորհակալություն ենք հայտնում այն բոլոր շնորհների համար, որոնցով օրհնել ես նրանց. ամուր հավատքով, հոյակերտ եկեղեցիներով, ոգեշունչ արարողություններով, արվեստի եւ մշակույթի բնագավառում բացառիկ տաղանդներով, ինչպես նաեւ տոկունությամբ՝ հաղթահարելու պատմության ընթացքում բոլոր մարտահրավերները:

Քեզ ենք ներկայացնում այն ցավը, որը մռայլեցնում է նրանց կյանքը այս օրերին, ռազմական ագրեսիայի զոհ դարձած սիրելիների համար հոսող արցունքները, նրանց անորոշությունն ու մտավախությունն ապագայի հանդեպ, ովքեր ստիպված էին լքել իրենց տները եւ պատերազմում ավերված սրբազան եկեղեցիների կորուստը:

Դու աշխարհի լույսն ես: Առաքիր քո լույսը բոլոր տառապող սրտերին ու կրկին ու կրկին ոգեշնչիր նրանց հավատքի, սիրո եւ հույսի քո ոգով»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՄԵՐ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԼՂ ՀԻՄՆԱՀԱՐՑ ՉԿԱ». ՄԻՐԶՈՅԱՆ

«Ինչպես արդեն ասել եմ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության թիվ մեկ առաջնահերթությունը ՀՀ շուրջ խաղաղության եւ կայունության ապահովումն է, սրա ուղղությամբ են մեր ջանքերը գործադրվում, ինչը ենթադրում է նաեւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթաց»:

Այս մասին ԱԺ-ում 2025 թվականի բյուջեի նախագծի նախնական քննարկման ժամանակ ասաց ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանի հարցին՝ արդյոք Արցախյան հակամարտության կարգավորման հարց ԱԳՆ օրակարգում կա:

«Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորումն ունի մի քանի նյութական արտահայտություն՝ խաղաղության պայմանագրի տեքստի վերջնականացում ու ստորագրում, ենթակառուցվածքների ապաշրջափակում, սահմանների սահմանազատման գործընթաց, իսկ ԼՂ հակամարտություն երբ ասում եք, մենք հասկանում ենք ամբողջ կոնֆլիկտը», - ասաց նա:

ԱԳՐԱՐԱՅԻՆՈՒՄ ԲՈՂՔԻ ԱԿՑԻԱ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Ագրարային համալսարանում դասախոսները գործադուլ եւ բողոքի ակցիա են իրականացրել՝ ԿԳՄՍ նախարարությունից աջակցություն չստանալու պատճառաբանությամբ՝ ասելով, որ նախարարությունը լիցենզիա չի տրամադրում բուհում ներդրվող նոր կրթական ծրագրերի համար:

Դասախոսները եւ ամբիոնի վարիչները դեմ են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի այն որոշմանը, որ Ագրարային համալսարանի 2-րդ մասնաշենքը պետք է տրվի Ֆրանսիական համալսարանին: Նշված մասնաշենքում այժմ Ագրարային համալսարանի ուսանողների դասապրոցեսն է ընթանում, շենքը շահագործվում է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՊԱՀԱՆՋՈՎ

Այսօր՝ ժամը 14:00-ին, Բաքվի բանտերում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների, քաղաքացիական անձանց, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ազատ արձակման պահանջով տեղի կունենա բողոքի ակցիա, հայտնում է Արցախի տեղեկատվական շտաբը:

«Բողոքի ակցիան կմեկնարկի ՄԱԿ-ի գրասենյակի առաջ, որից հետո մասնակիցների երթը կշարժվի դեպի ՀՀ արտաքին գործերի նախարարություն եւ ՀՀ-ում գործող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների դեսպանատներ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԻՆՉԻ ԿՏԱՆԻ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՎՐԱ ԽՆՁՈՐ ՆԵՏԱԾ ՊԱՊԻԿԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Նիկոլ Փաշինյանի վրա խնձոր նետած արցախցի 71-ամյա պապիկը Ավանի դատարանում է, սակայն դատական նիստը չկայացավ, քանի որ պաշտպանը առողջական խնդիրներ ուներ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի վրա խնձոր նետելու քրեական գործը քննելու է Երեւան քաղաքի դատավոր Արման Հովհաննիսյանը: Դատավոր Հովհաննիսյանը դատական համակարգում աչքի է ընկել իր օբյեկտիվ որոշումներով ու մշտապես, առանց կաշկանդվելու, բարձրաձայնել է դատական համակարգում տիրող իրավիճակը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 23-ի երեկոյան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց 2/2 հասցե էր գնացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իր հորաքրոջն ու դստերը տեսակցության: Հանդիպումը ավարտելուց հետո, երբ շենքից դուրս էր եկել, դիմացի շենքի 9-րդ հարկից քաղաքացին խնձոր էր նետել Փաշինյանի ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանն ու վերջինիս պահակախումբը ենթադրել էին, որ իրենց ուղղությամբ նռնակ է նետվել եւ անմիջապես պառկել էին գետնին: Իրավապահները օրեր շարունակ Ռուբինյանց 2/2 շենքում խուզարկություններ էին անում, փնտրում այդ տեսակի խնձոր մարդկանց բնակարաններում:

Ի վերջո, խնձորը նետելու կասկածանքով ձերբակալվեց 71-ամյա արցախցի Ալբերտ Առստամյանը: Դեպքից հետո փաստաբան Ռոման Երիցյանը հայտարարեց, որ Ալբերտ Առստամյանի ընտանիքի անդամներին (2 աղջկան եւ թոռնուհուն) նույն օրը, իրենց կամքին հակառակ, տեղափոխել էին ոստիկանության Զեյթունի բաժին եւ պահել մինչեւ առավոտյան 07:00-ն: Ալբերտ պապիկի բնակության վայրը մանկահասակ երեխաների ներկայությամբ ենթարկվել էր խուզարկության՝ խնձոր գտնելու նպատակով:

Արդյունքում, Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու «պատճառով» Ալբերտ Առստամյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու համար. նրա նկատմամբ ընտրվել է «բացակայելու արգելք» խափանման միջոցը:

ՀՀ քննչական կոմիտեն որոշում է կայացրել գործով նախաքննության ավարտ հայտարարել ու գործը ուղարկել է դատարան»:

«Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի գործի ընթացքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽԱԽՏՎԵԼ Է ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ

Շաբաթվա սկզբին Գլխավոր դատախազությունը հաղորդագրություն էր տարածել՝ նշելով, թե «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահներն ու նրա տեղակալը հափշտակել են խոշոր չափերով գումար:

Գործով մեղադրյալներ Ա. Գ.-ի եւ Մ.Հ.-ի շահերի պաշտպան փաստաբան Վահագն Ջիվանյանը ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ դատախազության կողմից խախտվել է իր պաշտպանյալների անմեղության կանխավարկածը՝ քննությամբ ձեռք բերված տվյալները ներկայացնելով ընտրովի եւ որպես դատավճիռ:

«Մեղադրանքը անհիմն է եւ անօրինական, այն հիմնված է կեղծ փաստաթղթերի վրա, իսկ ընտրովի սկզբունքով հարցաքննված վկաները ՀԽՄ ՀԿ ներկայիս ղեկավարության հետ գտնվում են թշնամական հարաբերությունների մեջ, հանդիսանում են նախկին նախագահի մտերիմները»,-ասաց փաստաբանը:

Նրա խոսքով՝ գործի նախապատմության հիմքում երկու եղբայրների տարաձայնություն է, երբ հարկային ստուգումների համար նախկին նախագահը խնդրել է իր եղբորը՝ դրամարկղի ելքի անդորրագրեր ստորագրել: Վահագն Ջիվանյանի փոխանցմամբ՝ թեեւ բազում փաստեր են ներկայացվել այդ կտրոնների ոչ վավեր լինելու, ՀԽՄ ՀԿ նախկին նախագահի կողմից առերեւույթ թույլ տված չարաշահումների, կեղծ փաստաթղթերով նախագահ ընտրվելու, ՀԽՄ-ին պատկանող շենքը գրոշներով սեփականաշնորհելու մասին, սակայն իրավապահ մարմինները դրանց ընթացք չեն տվել, հակառակը՝ կայացվել է որոշում ՀԽՄ ՀԿ նախկին նախագահի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու մասին, որն էլ իրենց կողմից բողոքարկվել է:

Փաստաբանը նշեց, որ բազմիցս միջնորդել են հարկային ստուգում անցկացնել նախկին նախագահի պաշտոնավարման ժամանակ, դատահաշվապահական փորձաքննություն իրականացնել, ինչը թե՛ քննիչը, թե՛ դատախազը մերժել են:

Ի դեպ, իր պաշտպանյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերաբերյալ բողոքները բավարարվել են եւ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը վերացրել է դրանք՝ անհիմն համարելով: Նա վստահ է, որ գործի դատաքննության ընթացքում կհաջողվի ապացուցել իր պաշտպանյալների անմեղությունը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՏՈՒՀԱՆԻՑ ՀԵՌԱԽՈՍ ԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԻՐԱՐ

Քրեակատարողական ծառայությունը պարբերաբար հայտարարում է, որ ազատազրկված անձանց արգելված իրերի փոխանցման փորձեր են իրականացվում, որոնք կանխվում են քրեակատարողական ծառայողների կողմից:

Կալանավորված անձին բերված հանձնուքում առկա լուծվող սուրճի փաթեթների մեջ հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող, սպիտակ, փոշենման զանգվածներ եւ առհասարակ ստուգումների արդյունքում խցերում գտել են արգելված իրեր:

Իսկ հիմա հարց. ինչո՞վ է զբաղված ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետի ժամանակավոր պաշտոնակատար, արդարադատության փոխգնդապետ Արկադի Թադեւոսյանը, երբ հիմնարկում ով ինչ ուզում է՝ անում է:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցն արձանագրել է, թե ինչպես են Վանաձորի բանտի դատապարտյալները կամ կալանավորները պարանի միջոցով բանտի մի պատուհանից մյուս պատուհանը հեռախոս փոխանցում միմյանց, ու, ըստ էության, այս ամենը տեղի է ունենում բանտի անվտանգության աշխատակիցների աչքի առաջ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

Լոռու մարզի պարեկները Սպիտակ համայնքի վարչական տարածքում ծառայություն իրականացնելիս ստուգման նպատակով կանգնեցրել են «Ֆորդ» մակնիշի մեքենան: Վահագնաձոր գյուղի բնակիչ 25-ամյա վարորդը մեքենայի սրահում առկա շուրջ 3,5 խմ փայտանյութի վերաբերյալ ներկայացրել է փաստաթուղթ, որում եղած տվյալները չեն համապատասխանել փայտանյութի քանակական եւ ժամանակագրային տվյալներին:

Փայտանյութով բեռնված մեքենան տեղափոխվել է ոստիկանության հատուկ պահպանվող տարածք:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Սպիտակի քննչական բաժին:

Հանգամանքները պարզվում են:

ԻՐԱՎԻՃԱԿ

2024-Ի 9 ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Ներքին գործերի նախարարությունը պնդում է, թե հանրապետությունում նվազել են սպանությունները:

«2023թ. 9 ամիսների ընթացքում հանրապետությունում արձանագրվել է սպանության 55 դեպք: 2024 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպանության 47 դեպք»,- նշվում է ներքին գործերի նախարարության հաղորդագրության մեջ:

Ըստ նույն աղբյուրի՝ սպանության դեպքերը նվազել են 14,5 տոկոսով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 29-ից 30-ը ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 110 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված: Այս մասին հայտնում են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանությունից:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 28, փաստաթղթեր կեղծելու՝ 16, խարդախության՝ 12, ֆիզիկական ներգործության՝ 11, թմրանյութի հայտնաբերման՝ 8, մարմնական վնասվածք պատճառելու՝ 5, հոգեկան ներգործության՝ 4, խուլիգանության՝ 3, զենք-զինամթերքի առգրավման, ծառերը, թփերը ապօրինի հատելու եւ ինքնիրավչության՝ 2-ական, սպանության փորձի, անձնական ունեցվածքի գողության, վստահված գույքը հափշտակելու, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, փաստաթղթեր կամ դրոշմներ հափշտակելու, ոչնչացնելու կամ վնասելու, հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու կամ տվյալները թաքցնելու, աշխատանքային անվտանգության կանոնները խախտելու, հողը փչացնելու, անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու եւ սառը զենքի հայտնաբերման՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է բնակարանային գողության՝ 3, անձնական ունեցվածքի գողության՝ 1 դեպք:

Հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 3-ը:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 30-ից 31-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 126 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՔՈՔՈԲԵԼՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 2 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Գործարար, կուսակցական գործիչ Խաչատուր Քոքոբելյանի ընտանիքին պատկանող «Կոկ սիստեմ» ՍՊԸ-ն քաղաքացիական հայց է ներկայացրել ընդդեմ իջեւանցի գործարար Սամվել Մատինյանի ու «Տավուշ մեդիա» ՍՊԸ-ի: Հայցը վերաբերում է այս տարվա մայիսի 27-ի ջրհեղեղից շարքից դուրս եկած Խաշթառակի կամրջի վերաբերյալ Սամվել Մատինյանի խոսքերին: «Կոկ սիստեմ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող Խաշթառակի փոքր ՀԷԿ-ը եւ Ս. Մատինյանին պատկանող «Հեքիաթ» հանգստի գոտին իրար կողքի են, Խաշթառակի կամրջին մոտ: Հայցով «Կոկ սիստեմ» ՍՊԸ-ն պահանջում է. «Պարտավորեցնել պատասխանող Սամվել Մատինյանին հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստական տվյալները՝ «Տավուշ Մեդիա» ՍՊԸ-ին պատկանող «Տավուշ» Թի Վի-ում նմանատիպ ռեպորտաժում նկարահանվելու միջոցով, եւ ասել հետեւյալը. «Ես՝ Սամվել Մատինյանս, «Տավուշ Մեդիա» ՍՊԸ-ի կողմից նկարահանված եւ 2024 թվականի մայիսի 28-ին հրապարակված ռեպորտաժում իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ եմ հայտնել «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի մասին: Մասնավորապես, ասել եմ, որ կամրջի մասնակի փլուզումը կատարվել է ՀԷԿ կառուցելու պատճառով, Ջրատարի խողովակ են անցկացրել, որպեսզի կարողանան աշխատանքներ կատարել: Նշել եմ, որ մեր աչքի առաջ տրակտոր են աշխատեցրել, գետի հունը խորացրել, հենասյուների տակը քանդել են եւ ճանապարհ են սարքել: Ասել եմ, որ երեք ջրուղիներից մեկն ընդհանրապես փակել են ՀԷԿ-ի տնօրենները, որպեսզի կարողանան շինարարական աշխատանքներ կատարել: Դրա պատճառով էլ քանդվել է սյունը: Նշել եմ նաեւ, որ կամրջի սյունը իրենք են թուլացրել: Իմ կողմից այդ ռեպորտաժում հնչեցված մտքերը իրականությանը չեն համապատասխանում: Ես ներողություն եմ խնդրում «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ից՝ իրականությանը չհամապատասխանող եւ վերջինիս գործարար համբավը արատավորող տեղեկություններ տարածելու համար: Պարտավորվում եմ հետագայում եւս զերծ մնալ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի վերաբերյալ սուտ տեղեկություններ տարածելուց»: Հայցվորը պահանջել է Ս. Մատինյանից հօգուտ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի բռնագանձել փոխհատուցում՝ 1 միլիոն ՀՀ դրամի չափով, եւս 1 միլիոն ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Այս քաղաքացիական հայցով Երեւան քաղաքի դատարանի Էրեբունի եւ Նուբարաշենի նստավայրում, դատական նիստեր են կայանում: Հավելենք, որ 2023 թվականից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Իջեւան համայնքը ընդդեմ «Կոկ սիստեմ» ՍՊԸ-ի հայցով դատավարությունը, հայցը նախկին վիճակի վերականգնման՝ ինքնակամ կառույցի քանդման եւ արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջների մասին է: Այդ հայցը վերաբերում է Խաշթառակի փոքր ՀԷԿ-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

Yandex Armenia

ՄԿՍՎՈՒՄ Է «ԱՌԱՏԱՁԵՌՆ ՆՈՅԵՄԲԵՐ» ԱԿՑԻԱՆ

Նոյեմբերին Yandex Armenia-ն անցկացնելու է «Առատաձեռն նոյեմբեր» բարեգործական ակցիան: Յուրաքանչյուր օգտատեր, ուրբաթ օրերին ղատվերներ կատարելով Yandex Go-ի միջոցով, կարող է դառնալ նախաձեռնության մասնիկը:

Տաքսիի եւ առաքման ծառայության բոլոր սակագներում յուրաքանչյուր 10 կմ-ի համար ընկերությունը բարեգործության նպատակով կփոխանցի 5 դրամ: Իսկ սննդի՝ յուրաքանչյուր ուրբաթօրյա պատվերի համար, սկսած 3000 դրամից, հիմնադրամները կստանան 30 դրամ:

Հավաքված միջոցները հավասարապես կբաշխվեն «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ), Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի եւ «ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» բարեգործական կազմակերպությունների միջեւ:

«Մեր «ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է այն նպատակով, որ էպիլեպսիա եւ այլ բարդ նյարդաբանական հիվանդություններ ունեցող երեխաներին օգնի ստանալ անրաժեշտ դեղորայքային բուժում ու ախտորոշիչ հետազոտություններ: Մենք ամեն օր պայքարում ենք, որպեսզի բարելավենք մեր շահառուների եւ նրանց ընտանիքների կյանքի որակը, երեխաներին լիարժեք, առանց սահմանափակումների կյանքի հնարավորություն տանք: Նմանօրինակ ակցիաների աջակցությունը մեզ համար շատ կարեւոր է, քանի որ մեծաթիվ մարդկանց է ընդգրկում բարեգործության մեջ՝ թույլ չտալով լինել անտարբեր: Միասին մենք կարող ենք ավելի մեծ օգնություն ցուցաբերել», - նշում է էպիլեպսիա ունեցող երեխաների օգնության «ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» բարեգործական հիմնադրամի նախագահ Ելենա Բաղդասարյանը:

«Շնորհակալ ենք Yandex Go-ին՝ տոներին ընդառաջ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամին (ՔՈԱՖ) աջակցելու համար: «Առատաձեռն նոյեմբեր» արշավը մեզ համար հրաշալի հնարավորություն է՝ բարձրացնելու Հայաստանի գյուղական համայնքներում կատարած մեր աշխատանքի իրազեկվածությունը: Սա նաեւ լրացուցիչ աջակցություն է՝ ընդլայնելու մանուկների ու նրանց ընտանիքների կյանքի բարելավմանն ուղղված մեր ծրագրերը», - նշում է ՔՈԱՖ-ի հաղորդակցության ու մարքեթինգի ղեկավար Մարկ Գարգարյանը:

Yandex Armenia-ի «Առատաձեռն նոյեմբեր» ակցիան երկրում կանցկացվի երկրորդ անգամ: Այն շահույթ չհետապնդող կազմակերպություններին աջակցություն ցուցաբերող նախագծերից մեկն է: Ընկերության գործընկեր մի քանի կազմակերպությունների շահառուներն ու պրոֆիլային մասնագետները մշտապես գործող բարեգործական ծրագրի շրջանակում նաեւ ստանում են անվճար ուղեւորություններ եւ առաքումներ Yandex Go-ում:

2023 թվականին «Առատաձեռն նոյեմբեր» ակցիայի շրջանակում հավաքված նվիրատվությունների շնորհիվ «ՎԻՎԱ» հիմնադրամն օգնել է ավելի քան 700 երիտասարդ մայրերի՝ ապահովել նրանց անհրաժեշտ իրերով, հագուստով եւ հիգիենայի պարագաներով: «Շտապիր դեպի բարին» հիմնադրամն օգնել է թանկարժեք վիրահատություն կատարել կերակրափողի քիմիական այրվածք ստացած երեխայի համար: Իսկ հենաշարժողական հաշմանդամություն ունեցող 10 երեխայի համար «Հայ մայրեր» հիմնադրամը կարողացել է երեք ամսվա ընթացքում տնային պայմաններում կազմակերպել կինեզիոթերապիայի կուրս:

Ընդհանուր առմամբ, 2023 թվականին «Առատաձեռն նոյեմբերի» արդյունքներով Yandex Armenia-ն բարեգործական կազմակերպություններին փոխանցել է 3 մլն դրամ:

2024 թ. բարեգործական կազմակերպությունների, ակցիայի մասնակիցների մասին տեղեկատվություն

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է՝ ուղղված Հայաստանի գյուղաբնակ երեխաների կյանքի փոխակերպմանը կրթության, առողջապահության, սոցիալական աշխատանքի եւ տնտեսական զարգացման համապարփակ ծրագրերի միջոցով: ՔՈԱՖ-ը կենսական նշանակության մի շարք ծառայությունների հասանելիություն է ապահովում իր նորարար ծրագրերի միջոցով, որոնց հիմքում արդյունավետ ուսումնառության, բարեկեցության եւ ստեղծարարության խթանումն է: Հիմնադրամը նաեւ աջակցում է երիտասարդների մտահորիզոնի ընդլայնմանը՝ այդպիսով ոգեշնչելով նրանց կերտել ավելի փայլուն ապագա:

«ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» - Հայաստանում միակ հիմնադրամը, որն ամբողջությամբ նվիրված է էպիլեպսիա եւ այլ ծանր նյարդային հիվանդություններ ունեցող երեխաների աջակցությանը: Հիմնադրամը երեխաներին ապահովում է անհրաժեշտ դեղորայքով, կազմակերպում է ախտորոշիչ եւ գենետիկ հետազոտություններ: Հիմնադրամը բուժման հասանելիությունը բարելավելու նպատակով ակտիվորեն համագործակցում է բժիշկների ու առողջապահության նախարարության հետ եւ բարեգործական ակցիաներ է անցկացնում՝ ուշադրություն հրավիրելով մանկական նյարդաբանական հիվանդությունների խնդրի վրա:

«Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ» - բարեգործական կազմակերպություն, որն աջակցում է ծանր հիվանդություններով երեխաներին՝ ապահովելով բուժման հասանելիություն ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային առաջատար կլինիկաներում: Հիմնադրամը ժամանակակից բժշկական սարքավորումներով է զինում հիվանդանոցները եւ նպաստում բժիշկների մասնագիտական առաջընթացին, որպեսզի նրանք կարողանան ապահովել օգնության ամենաբարձր մակարդակ: Կազմակերպությունն իրականացնում է նաեւ հիվանդությունների կանխարգելման եւ վաղ հայտնաբերման ծրագրեր՝ նվազեցնելով մանկական մահացությունը եւ բարելավելով երեխաների կյանքի որակը:

ԿՆՔԵԼ ԵՆ $30 ՄԼՆ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Հայէկոնոմբանկը», ամրագրելով երկարատեւ համագործակցությունը Հոլանդական զարգացման բանկի (FMO) հետ, կնքել է երեսուն միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ թվով չորրորդ պայմանագիրը՝ հասցնելով վերոնշյալ գործընկեր-կազմակերպության հետ կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը մոտ 70 միլիոն ԱՄՆ դոլարի:

Ֆինանսավորման այս փաթեթի շրջանակներում ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին, կին եւ երիտասարդ ձեռներեցներին, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտին՝ նպաստելով երկրի տնտեսության կայուն զարգացմանը:

«Հայէկոնոմբանկը» Հոլանդական զարգացման բանկի հետ սկսել է համագործակցել դեռեւս 2010 թվականից, որը, որպես առաջատար ներդրող, աջակցում է զարգացող երկրների եւ զարգացող շուկաների կայուն մասնավոր հատվածին՝ հավակնոտ ծրագրերում եւ ձեռնարկատիրություններում ներդրումներ իրականացնելու միջոցով:

Բանկն այս տարվա սկզբից մինչ օրս միջազգային ֆինանսական ընկերությունների հետ կնքել է 66 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վարկային պայմանագրեր:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶՊՄԿ–Ն ԳԼԽԱՎՈՐՈՒՄ Է 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2024 թվականի ինը ամիսներին 1000 խոշոր հարկատուների ցանկը:

«Ժողովուրդ» օրաթերթը, ցանկն ուսումնասիրելով, նկատեց, որ 2024 հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ Հայաստանի խոշորագույն հարկատուն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն է (ԶՊՄԿ): Նշված ամիսներին ընկերությունը 83.6 մլրդ դրամի հարկեր ու տուրքեր է վճարել, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 31.3 մլրդ դրամով կամ մոտ 63%-ով:

Երկրորդ խոշոր հարկատուն տեխնիկա ներմուծող, վաճառող եւ արդեն նախորդ տարվանից արտահանող «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ն (Mobile Centre) է: Ընկերությունը վճարել է 49.1 մլրդ դրամի հարկեր: Երրորդ տեղում «Գրանդ տոբակո» ՍՊԸ-ն է՝ 39.8 մլրդ դրամի հարկերով:

Չորրորդ տեղում «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ն է, որի հարկերը 8%-ով նվազեցրել են եւ առաջին ինն ամիսներին կազմել են 36.3 մլրդ դրամ:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ»՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

«Կոնվերս բանկը» կրկին AMX Հայաստանի ֆոնդային բորսայի ու Կենտրոնական դեպոզիտարիայի ամենամյա համատեղ մրցանակաբաշխության մրցանակակիր է: Բանկի ներդրումն ու աշխատանքի արդյունավետությունն ամենաբարձր գնահատականին է արժանացել Կենտրոնական դեպոզիտարիայի Most Progressive Member of the Depositary System անվանակարգում. մրցանակը, ի դեպ, շնորհվում էր առաջին անգամ: Իսկ բանկի ֆինանսական շուկաների վարչության երկրորդ կարգի դիլեր Սոնա Գրիգորյանը մրցանակի է արժանացել ՎՋԵԲ՝ կապիտալի շուկաներին նվիրված առցանց ծրագրի ընթացքում ակտիվության եւ արդյունքների համար:

«Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ֆոնդային բորսայի եւ Կենտրոնական դեպոզիտարիայի մեր գործընկերներին կապիտալի շուկայում «Կոնվերս բանկի» գործունեությանը հերթական անգամ բարձր գնահատական տալու եւ մրցանակների համար: Վստահ ենք, որ համատեղ ուժերի շնորհիվ կարողանալու ենք հասնել ՀՀ տնտեսության հետագա զարգացման կարեւորագույն հիմնասյուներից հանդիսացող կապիտալի շուկայի զարգացմանը:»,- ասել է «Կոնվերս բանկի» ֆինանսական շուկաների վարչության պետ Հասմիկ Մաթեւոսյանը:

Նշենք, որ երեկ կայացած մրցանակաբաշխությանը մասնակցել են ոլորտում ներգրավված բանկերի, ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր կենտրոնական բանկից, ֆինանսների նախարարությունից, կենտրոնական դեպոզիտարիայից, Հայաստանի ֆոնդային բորսայի խորհրդի անդամներ:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Գ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՎԵՍՏԻ ԼԵԶՎՈՎ

«Գիտության շաբաթվա» մրցանակաբաշխությունը Կապի թանգարանում էր համախմբել տաղանդաշատ երիտասարդների: Պարգեւատրվեցին «Գիտության շաբաթը՝ իմ աչքերով», «Ասղային հորիզոն» եւ «ԳիտաCon» անվանակարգերի հաղթողները:

Նկարչական անվանակարգում գլխավոր մրցանակին արժանացավ Ջիմ Հովհաննիսյանի «Մեծ պայթյուն» աշխատանքը, գրական մրցույթում հաղթող ճանաչվեց Արթուր Առաքելյանի «Ուտոպիայի գինը» պատմվածքը, իսկ կոմիքսների անվանակարգում առաջին հորիզոնականը զբաղեցրեց Լուսինե Պետրոսյանի «Իսկ ինչ, եթե ստացվի» նախագիծը:

«Երբ սկսեցի մտածել, թե ինչ նկարեմ մրցույթի համար, անմիջապես հասկացա, որ իմ թեման լինելու է տիեզերքը: Մտածեցի, որ սպիտակ խոռոչը համապատասխանում է այս գաղափարին. այն, ի տարբերություն սեւ խոռոչի, ոչ թե կլանում, այլ ժայթքում եւ տարածում է մատերիան: Սակայն դրա գոյությունը դեռեւս գիտականորեն ապացուցված չէ: Աշխատանքի ընթացքում հասկացա, որ նկարս ավելի շատ Մեծ պայթյունի նման է ստացվում, որը համարվում է տիեզերքի, ամեն ինչի, այդ թվում՝ մեր կյանքի սկիզբը: Իհարկե, սա ավելի շատ մաքուր գիտաֆանտաստիկա է: Ես պատկերացում չունեմ, թե ինչ տեսք է ունեցել Մեծ պայթյունը. սա պարզապես իմ մեկնաբանումն է», - ասաց «Գիտության շաբաթը՝ իմ աչքերով» մրցույթում առաջին տեղը զբաղեցրած 16-ամյա Ջիմ Հովհաննիսյանը:

Մրցույթների հաղթողները ստացան խելացի հեռախոսներ, պլանշետներ, ինչպես նաեւ խելացի ժամացույցներ: Մրցանակները հանձնեց Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը:

«Մեզ համար կարեւոր է խթանել երիտասարդների հետաքրքրությունը գիտության հանդեպ եւ աջակցել նրանց ստեղծագործական մտքի զարգացմանը: Այսօրվա մրցանակակիրները ցույց տվեցին, որ գիտությունը կարող է ոգեշնչման անսպառ աղբյուր լինել արվեստի համար», - նշեց Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը:

Խոսելով մրցույթի մասին՝ «Գիտուժ» նախաձեռնության գործառնական տնօրեն Լիլիթ Մարգարյանն ասաց, որ արդյունքները տպավորիչ են թե՛ մասնակցության դիմումների քանակով, եւ թե՛ ներկայացված բովանդակության մակարդակով: «Սա «Գիտուժի» եւ Team Telecom Armenia-ի առաջին քայլն էր՝ «Գիտության շաբաթվա» շրջանակում ոգեշնչելու Հայաստանի ստեղծարար համայնքներին ստեղծագործելու գիտության թեմայով: Մեծ ուրախությամբ նշում ենք, որ այս նախաձեռնությունը հաջողությամբ իր ավարտին հասավ: Վստահ ենք, որ այս փորձը պետք է դարձնել շարունակական՝ նպաստելով Հայաստանում գիտական երեւակայության եւ ստեղծարար մտածողության զարգացմանը»:

Team Telecom Armenia-ն, հանդիսանալով Գիտության շաբաթվա գլխավոր գործընկեր, շարունակում է աջակցել երիտասարդ տաղանդների զարգացմանը եւ գիտության հանրայնացմանը Հայաստանում:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հոկտեմբերի 31-ը ֆինանսական օրացույցում նշվում է որպես Խնայողությունների միջազգային օր: Այս առիթով Իդրամ Junior-ը հյուրընկալել էր Koreez 2024-ի «Junius» ֆինանսական գրագիտության մրցույթի 10-14 տարեկան շուրջ 25 մասնակիցների:

Միջոցառման ընթացքում պատանի հյուրերին ներկայացվեց օրվա պատմությունն ու խնայողությունների թեմայով կարեւոր տեղեկատվություն:

Իդրամի եւ IDBank-ի հաղորդակցության եւ սոցիալական պատասխանատվության ծրագրերի վարչության ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանի խոսքով՝ խիստ կարեւոր համարելով հաճախորդների գրագիտությունը, ընկերությունները իրենց սոցիալական պատասխանատվության ծրագրերում արդեն իսկ ստանձնել են մեր երկրում ֆինանսական կրթության մասսայականացման առաքելությունը. «Այս համատեքստում հատկապես կարեւոր ենք համարում երեխաների ֆինանսական գրագիտության հարցն ու այս ուղղությամբ Իդրամ եւ IDBank ընկերությունները տեւական ժամանակ է տարբեր կրթական ծրագրեր են իրականացնում: Երեխաների հետ այսօր հանդիպեցինք խնայողությունների միջազգային օրվա շրջանակներում, եւ առիթն օգտագործելով՝ հերթական կարեւոր զրույցն ունեցանք ֆինանսների, դրանց տնօրինման, խնայողությունների ու բյուջետավորման մասին»,- նշեց Տաթեւիկ Վարդեւանյանը:

Միջոցառման ամենաաշխույժ հատվածն ապահովեց երեխաների սիրելի ընկեր Ջունիորը, ում առաջադրած ինտելեկտուալ խաղի բոլոր հարցերն այս անգամ վերաբերում էին օրվա գլխավոր թեմաներին՝ բյուջետավորմանն ու խնայողություններին: Մրցույթում հաղթած մասնակիցներն արժանացան մրցանակների:

Ի դեպ, IDBank-ը նույնպես նշում էր Խնայողության օրը՝ հաճախորդների համար իրականացնելով «Ավանդային արշավ»՝ եւս մեկ քայլով խթանելով ավանդ ունենալու գաղափարը հաճախորդների շրջանում: Բոլոր մասնաճյուղերում հաճախորդներին ներկայացնում էին արշավի պայմանները. հոկտեմբերի 31-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ձեւակերպելով 400,000 ՀՀ դրամ եւ ավելի ավանդ Բանկի մասնաճյուղերում կամ Idram&IDBank հավելվածում՝ հաճախորդները կմասնակցեն 5 iPhone 16 pro հեռախոսների խաղարկությանը, ինչպես նաեւ դրամային «Առանց ավելացման իրավունքի» ավանդ ձեւակերպելու դեպքում ավանդի տարեկան տոկոսադրույքը կկազմի հատուկ՝ մինչեւ 10.1%:

Հիշեցնենք, որ Իդրամ ընկերության Սոցիալական ծրագրերի գլխավոր ուղղություններից մեկը ֆինանսական կրթությունն է, որին միայն 2024 թվականին ուղղվել է ավելի քան 30 միլիոն դրամ: Իրականացված բազմաթիվ ծրագրերի ու միջոցառումների շարքում Koreez կրթական ծրագրի համատեղ ստեղծված «Junius» ֆինանսական կրթության խաղն է, որով երեխաները իրենց տարիքին համապատասխան կարող են ծանոթանալ ֆինանսների աշխարհին. խաղը հասանելի է ի Idram Junior հավելվածում:

ԻԴՐԱՄ եւ IDBANK ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄ ՏԵՍԱՎ ԵՎ ՉՏՐՏՆՋԱՑ

Երեկ 44 օրա պատերազմում անմահացած հերոս Հայկազ Մկրտչյանի ծննդյան օրն էր:



Հայկազ Մկրտչյանը կամ ինչպես դիմել են իրեն՝ ուրախ եւ ժպտերես Հայկը, հայկական բանակ զորակոչվել է 2019 թվականի հունվարի 23-ին եւ իր ապրած 20 տարիների ընթացքում հասցրել է մասնակցել 2 պատերազմների՝ Տավուշյան մարտերին եւ Արցախյան երկրորդ պատերազմին: Հայկազը կրտսեր սերժանտ էր:

Հայկազի քույրը ArmLur.am-ի հետ զրույցում պատմեց, որ եղբայրը սկզբում ծառայել է Լուսակերտում, ապա տեղափոխվել Տավուշի մարզի Մեհրաբ զորամաս:

2020 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը հրետանային հարվածներով փորձել են վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության հյուսիս-արեւելյան հատվածի Մեհրաբի գնդի պահպանության տակ գտնվող մարտական հենակետերին, որից հետո զորամասը բերվեց մարտական պատրաստականության բարձր աստիճանի: Այդ ժամանակ 120 մմ ականանետային դիվիզիոնում արդեն իսկ առկա էր համահավաք մարտկոց, որի շարքերում ընդգրկված են եղել մասնագիտական բարձր գիտելիքներով եւ մարտական պատրաստությունում լավագույն կողմերով աչքի ընկած զինծառայողներ: Մկրտչյան Հայկազը նույնպես ընդգրկված էր վերոնշյալ մարտկոցում՝ որպես 3-րդ ականանետային հաշվարկի հրամանատար: Առաջին իսկ վայրկյաններից չի ընկճվել, խուճապի չի մատնվել, իրեն դրսեւորել է որպես խիզախ մարտիկ՝ ճիշտ նշանափորձելով ականանետը, զգալի վնասներ պատճառելով հակառակորդի կենդանի ուժին եւ կրակային միջոցներին, ոգեշնչելով իր ենթակայության տակ գտնվող անձնակազմին արագ մատակարարելու ականները՝ ավելի շատ կրակոցներ կատարելու համար: Հուլիսյան մարտերին եղել է կիզակետում, իր մաթեմատիկական մտածողության եւ արագ հաշվելու կարողությամբ, կարողացել է պատճառել հակառակորդի կենդանի ուժին մեծ կորուստ:

Հուլիսյան մարտերի համար Հայկազը արժանացել է «Մարտական հերթապահություն» մեդալին: Մարտերի ժամանակ ասում էր. «Երբ ետ եմ շրջվում, տեսնում եմ գյուղը, հասկանում եմ, որ այդ մարդիկ մեր, իմ հույսով են ամեն օր հանգիստ քնում ու զարթնում, բա դրանից ավելի լավ բան կա՞... Իրենց համար ո՞նց չկռվենք»:

Հայկազի քույրը ArmLur.am-ին նաեւ պատմեց, որ երբ սեպտեմբերին սկսվեց Արցախյան երկրորդ պատերազմը, ժպտուն աչքերով Հայկազը Տավուշում ծառայության ժամանակ անհանգստացել եւ ասել է, որ իրենք Տավուշում են, իսկ մյուս տղաներն Արցախում են կռվում:

Քրոջն ասում էր. «Սիրտս պայթում է, տեղս չեմ գտնում, ինձ մեղավոր եմ զգում, պիտի գնամ Արցախում կռվեմ: Եթե մենք չկռվենք, թուրքը կմտնի մեր մանկության տունը: Կտեսնե՞ք, մինչեւ մենք Տավուշից Ղարաբաղ չգնանք, կռիվը չի վերջանա»:

2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտից Ադրբեջանը նախաձեռնեց աննախադեպ, լայնամասշտաբ, պլանավորված հարձակում Արցախի Հանրապետության դեմ: Հոկտեմբերի 14-ին Մեհրաբի զորամասի լավագույն մարտկոցը տեղափոխվեց Մեխակավան (Զաբրահիլ): Մկրտչյան Հայկազը, հուլիսյան մարտերից դեռ չհագեցած, ավելի շատ ական էր կրում իր ականանետի մոտ, որպեսզի զգալի վնաս պատճառի հակառակորդին: Մկրտչյան Հայկազի հաշվարկը 4 օրվա ընթացքում կատարել է մոտ 300 կրակոց՝ վերջում հասցնելով դրանց թիվը 1000-ի:

Մարկոտցը մասնակցել է Ջրականի, Ծակուռիի, Թաղավարտի, Դրախտիկի, Ազոխի, Վերին Թաղերի, Կարմիր Շուկայի համար տրվող մարտերին: Հայկազը պատերազմի ընթացքում առաջին անգամ տեսավ Արցախը, երազեց այնտեղ ապրելու մասին, բայց, ցավոք սրտի, երազանքը մնաց անկատար:

Հայկազ Մկրտչյանը վիրավորվել է թշնամու կողմից կիրառված բայրաքթարի պատճառով: Ապրելու համար համառ կռվում Հայկազը 12 օր պայքարեց վերակենդանացման բաժանմունքում, սակայն նոյեմբերի 9-ին՝ հրադադարից 1 ժամ առաջ, մահացավ:

«Հայկազը պատերազմում չի պարտվել, քանզի հաղթել է վախը, դժվարությունները, իսկ նահանջն իր համար անընդունելի է եղել: Երբեք չէր հանդուրժում անարդարությունը եւ ամեն գնով պայքարում էր դրա դեմ: Շատ կատակասեր էր, բարի, փայլուն մտքով, սակայն միաժամանակ ուժեղ եւ հպարտ: Իր մաթեմատիկական բարձր ունակությունների, արագաշարժության եւ հաշվարներ կատարելու կարողության շնորհիվ իրենց մարտկոցը մեծ հաջողություններ է գրանցել: Հայկազը նաեւ նորամուծություններ էր մտցնում ռազմական տեխնիկայի կիրառման մեջ: «Արցախից որ զանգում էր, այնքան հպարտ էր, որ այնտեղ է. ասում էր՝ գիտե՞ս՝ ինչքան լավ ենք կատարում մեր մարտական առաջադրանքները: Հրամանատարի խոսքով՝ Հայկազը միշտ ասել է՝ եկեք ամեն ինչ արագ անենք, տղերքը կռվում են, իրենց մենակ չթողնենք: Ինքը պատերազմ տեսավ ու երբեք չտրտնջաց, որովհետեւ կռվում էր հանուն Հայրենիքի»,-ArmLur.am-ի հետ զրույցում ամփոփեց հերոս Հայկազ Մկրտչյանի քույրը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՄԻՍՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԾՆՈՂՆԵՐԸ ԴՌՆԵԴՈՒՌ ԵՆ ԸՆԿԵԼ

ԵՐԵՎԱՆԻ 135 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ «ՓԱԿԵԼ» ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ահազանգեր են ստացվում քաղաքացիներից, որ Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում գտնվող թիվ 135 մսուր-մանկապարտեզը (նախկինում թիվ 174 մսուր-մանկապարտեզ) տեւական ժամանակ է՝ փակ է: Փակ լինելու պատճառով շատ ծնողներ, որոնք աշխատում են, չգիտեն, թե ինչ անեն, որպեսզի ե՛ւ երեխան միայնակ չմնա, ե՛ւ աշխատանքից չբացակայեն:

«Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած ծնողներից մեկը ասաց, որ մանկապարտեզը պետք է վերաբացվեր սեպտեմբեր ամսին, սակայն շուրջ երկու ամիս է, ինչ մանկապարտեզը փակ է:

Թիվ 135 մանկապարտեզի հետ կապված հետաքրքիրն այն է, որ դեռ 2021 թվականին, երբ Երեւանի քաղաքապետը Հայկ Մարությանն էր, Երեւանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում պետք է հիմնանորոգվեր: Ըստ այդ ծրագրի՝ մանկապարտեզում պետք է լինեին էներգաարդյունավետությանը միտված սարքավորումներ, LED լուսատուներ, պետք է իրականացվեր շենքերի սեյսմիկ վերազինում, դռների եւ լուսամուտների փոխարինում եւ արեւային ֆոտովոլտային վահանների տեղադրում, տանիքի պատերի ջերմամեկուսացում, որոնց արդյունքում կկրճատվեին հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաեւ տեղի կունենար արտանետվող CO2 գազի նվազեցում:

Հարկ է նշել, որ այս ամենը միայն թիվ 135 մանկապարտեզի համար չէր նախատեսված, այլ նաեւ 138, 109, 110, 81 եւ 161 մանկապարտեզների համար:

Շշեղվելով թեմայից՝նշենք, որ, խնդրով պայմանավորված, ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել Երեւանի թիվ 135 մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առեւտրային կազմակերպության հետ, սակայն համացանցում առկա բոլոր հեռախոսահամարները գոյություն չունեին:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ Երեւանի քաղաքապետարանի հետ՝ պարզելու՝ ինչի համար է փակվել մանկապարտեզը եւ արդյոք վերաբացվելու է կրկին, որտեղից էլ պատասխանեցին. «Մանկապարտեզն անպայման վերաբացվելու է, խոսքը առաջիկա ամիսների ընթացքում վերաբացման մասին է: Այս պահին կոնկրետ օր ասել չենք կարող, որովհետեւ մինչեւ այս պահը, որ պետք է վերաբացվեր, շինարարական, տեխնիկական որոշակի խնդիրներ առաջանալու պատճառով՝ թերությունների շտկման ինչ-որ պրոցես է եղել: Մեր ունեցած տվյալներով՝ վերջին շտրիխներն են իրականացվում, բայց այս պահին կոնկրետ բացման օր չենք կարող ասել. առաջիկա ամիսներին 90 տոկոս հավանականությամբ մանկապարտեզը կվերաբացվի»:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՏԵՐՍԻ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս եկավ Փարիզի մրցաշարի երրորդ շրջան:

Փարիզի Մաստերս մրցաշարի տղամարդկանց մենախաղի երկրորդ շրջանում Կարեն Խաչանովը մրցեց աշխարհի 31-րդ ռակետ Ֆրանսիան ներկայացնող Մպետչի Պերիկարի հետ: Մոտ երկու ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթեց երեք սեթում՝ 6:7, 6:1, 6:4 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 24-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում:

Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է:

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

ԱՐՑԱԽՅԻ ՄԱՐԶԻԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Արցախցի էրիկ Առուստամյանը հաղթեց ադրբեջանցի Թանգի Նասիբովին եւ դուրս եկավ մինչեւ 18 տարեկանների բռնցքամարտի աշխարհի առաջնության կիսաեզրափակիչ:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ ըմբիշը հաղթանակ էր տարել թուրք բռնցքամարտիկի նկատմամբ:

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Նարեկ Մկրտչյանը (81 կգ) հանդես է եկել Մ20 տարեկանների խմբում եւ երկամարտի 341 կգ (150+191) արդյունքով նվաճել ոսկե մեդալ:

Պոկում վարժություն հայ ծանրորդը երրորդն է եղել եւ արժանացել բրոնզե մեդալի, հրում վարժությունում նա դարձել է ոսկե մեդալակիր: Մկրտչյանը հաջող է կատարել բոլոր 6 մոտեցումները:

Ավելի վաղ Հայաստանից ոսկե մեդալակիր էին դարձել Ժորա Գրիգորյանը (Մ20, 55 կգ), Ալեքսանդրա Գրիգորյանը (Մ20, 59 կգ),Գառնիկ Չոլակյանը (Մ23, 61 կգ) եւ Գոռ Սահակյանը (Մ23, 73 կգ), իսկ Ռաֆիկ Մինասյանը (Մ20, 61 կգ) արժանացել էր արծաթե մեդալի:

● *Նոյեմբերի 9-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար:

Կարինե Ջիլավյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել՝

1) ամուսնալուծվողի (ամուսնալուծվողների) անձը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենը,

2) ամուսնության պետական գրանցման վկայականը՝ առկայության դեպքում, կամ ամուսնության պետական գրանցման մասին տվյալներ՝ գրանցող մարմինը, վայրը եւ ժամանակը,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասի,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անգործունակ ճանաչելու մասին,

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին ազատազրկման դատապարտելու վերաբերյալ,

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծությունը գրանցելու մասին,

7) անգործունակ անձի նկատմամբ օրինական ներկայացուցիչ նշանակվելու մասին իրավասու մարմնի որոշման պատճենը:

8. Ամուսնալուծության պետական գրանցման դիմումը լիազորված անձի միջոցով ներկայացվելու դեպքում նաեւ ներկայացվում է անձի լրացրած եւ սահմանված տեղեկությունները պարունակող դիմումը՝ հաստատված նոտարական կարգով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացված դիմումը ուժի մեջ է վեց ամսվա ընթացքում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Գեւորգ Կիրակոսյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված, 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի մոտ երեկ՝ երեկոյան, տեղի ունեցավ անվանի դերասան, ռեժիսոր, սցենարիստ Երվանդ Մանարյանի 100-ամյակին նվիրված արձանի բացման պաշտոնական արարողությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*